

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67  
Ե 540

Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը  
Գլխավոր խմբագիր՝  
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան  
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան  
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Զոչարյան

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ  
100-ԱՄՅԱԿԻՆ**

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06  
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015  
© Հեղ. խումբ, 2015

Երևան  
ԵՊՀ հրատարակչություն  
2015

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Վիզեն Քոչարյան**

“PERINCEK V. SWITZERLAND” գործով ՄԱԲԴՈՒԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՈՒԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ .....5

**Լևոն Գևորգյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ԶԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ  
ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ .....18

**Անի Միմոնյան**

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ .....25

**Արթուր Վաղարշյան**

*ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ* ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ .....35

**Տարոն Միմոնյան**

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....56

**Ալվարո Ալեքսանյան**

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ .....68

**Նարինե Դավթյան**

*ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ* ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԻ ՓՈԽԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....87

**Գևորգ Դանիելյան**

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ .....98

**Վարդան Այվազյան**

ԿՈՆՍՏԻՏՈՒՅԻՆՆԱԼԻԶՄԻ (ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)  
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ..... 124

**Անահիտ Մանասյան**

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 140

**Արա Գաբուզյան**

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԱՂԲՅՈՒՐ ..... 149

**Սամվել Դիլբանյան**

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ..... 160

**Аида Искоян**

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА:  
МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ ..... 174

**Գրիգոր Բեքմեզյան**

ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ ..... 190

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԹՅՈՒՐ**

**Արա Գաբրույան**  
*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

ՀՀ 2003թ. քրեական օրենսգրքը սկիզբ դրեց քրեական օրենսդրության բարեփոխումներին: Շատ նորամուծությունների հետ մեկտեղ ՀՀ քրեական օրենսգրքում առաջին անգամ ձևակերպվեց այն դրույթը, որ ՀՀ քրեական օրենսդրությունը հիմնվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի վրա:

Հայտնի է, որ զարգացած երկրների մեծ մասի քրեական օրենսդրությունը կառուցվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի վրա: ՀՀ-ի համար սա, ըստ էության, նորություն է, ինչը մի շարք հարցերի տեղիք է տալիս: Մասնավորապես, ինչպե՞ս և ի՞նչ սահմաններում են միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը ՀՀ քրեական օրենսդրության աղբյուր, միջազգային իրավունքի ո՞ր հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերն են այդ աղբյուրի դերը կատարում և այլն:

Ակնհայտ է, որ միջազգային իրավունքը կարող է քրեական օրենսդրության աղբյուր դառնալ այն դեպքում, երբ սահմանում, վերացնում կամ փոփոխում է արարքի հանցավորությունը կամ կարգավորում է քրեական պատասխանատվության ու պատժի, ինչպես նաև ազգային քրեական օրենսդրության գործողության հարցեր: Դրա համար էլ կարծում ենք, որ քրեական օրենսդրության կապակցությամբ «իրավունքի աղբյուր» հասկացությունը նշանակություն ունի միայն ձևական, իրավաբանական իմաստով: Այդպիսի աղբյուրը իրավաստեղծագործության հետևանք է: Հետևաբար միջազգային իրավունքի սկզբունքը կարող է քրեական օրենսդրության աղբյուր լինել այն դեպքում, երբ ձևակերպված է միջազգային իրավական նորմերում: Հատկապես քրեական պատասխանատվության կապակցությամբ զուտ իրավական գաղափարի խախտման փաստը չի

կարող բավարար լինել և այդ դեպքում քրեական պատասխանատվությունը բացառվում է<sup>1</sup>: Այսպիսով՝ միջազգային իրավունքի դոկտրինալ սկզբունքները, որոնք նորմատիվ ձևակերպում չունեն, չեն կարող քրեական իրավունքի աղբյուր լինել:

Անդրադառնա՞նք միջազգային իրավունքի նորմերին: Միջազգային իրավունքի նորմ ասելով հասկանում ենք վարքագծի կանոն, որը ճանաչված է միջազգային իրավունքի սուբյեկտների կողմից՝ որպես իրավաբանորեն պարտադիր: Մեր կարծիքով քրեական իրավունքի և օրենսդրության աղբյուր կարող են լինել միջազգային իրավական այն նորմերը, որոնք պարտադիր, իմպերատիվ բնույթ ունեն: Միայն այդ նորմերի պահանջներն են պետության համար պարտադիր և միայն այդ նորմերն են, որ պարտադիր պետք է տեղ գտնեն ազգային քրեական օրենսդրության մեջ:

Իրենց գործողության բնույթով պայմանավորված՝ միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը դասակարգվում են հետևյալ կերպ՝

- 1) անմիջական գործողության նորմեր, որոնք առանց ազգային քրեական օրենսդրության մեջ ընդգրկվելու կարող են գործել,
- 2) միջնորդավորված գործողության նորմեր, որոնք կամ նույնությամբ ընդգրկվում են ազգային քրեական օրենսդրության մեջ կամ ազգային քրեական օրենսդրությունը համապատասխանեցվում է դրանց:

Բացի դա, շատ կարևոր հարց է միջազգային իրավունքի և ներպետական, ազգային իրավունքի հարաբերակցության հարցը: Այս հարաբերակցության հարցը հիմնականում ընկալվում է դուալիստական մոտեցմամբ: Դուալիզմի էությունն այն է, որ միջազգային և ներպետական իրավունքը դիտվում են որպես տարբեր իրավակարգեր, որոնք կարող են համագործակցել: Միջազգային իրավական պարտավորություններ ստանձնելով՝ պետությունը հաշվի է

<sup>1</sup> St' u Степаненко В. И. Влияние международных договоров на содержание и сферу действия советского уголовного права. Автореф. ... дисс. Кан. Юрид. наук. Свердловск 1981 էջ 8:

առնում իր ներպետական իրավական նորմերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրանք փոխելու հնարավորությունը<sup>1</sup>: Կարծում ենք, որ միջազգային իրավունքի և ազգային իրավունքի փոխգործողության նկատմամբ դուալիստական մոտեցումը պետական սուվերենության և միջազգային իրավունքի միջև փոխզիջման հետևանք է: Եթե ազգային իրավունքի նորմերի ազդեցությունը կարելի է համարել առաջնային, ապա միջազգային իրավունքի արդեն գործող նորմերի առկայության պայմաններում պետությունը չի կարող չճանաչել դրանց գերակայությունը ներպետական իրավունքի նորմերի նկատմամբ: Միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ներպետական իրավունքի նկատմամբ նշանակում է, որ յուրաքանչյուր պետության իրավունք բաղկացած է երկու իրավական համակարգերից՝ ներպետական և միջազգային իրավական: Այս երկուսը համատեղ կազմում են որոշակի միասնություն՝ պետության իրավունք, իսկ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է միջազգային իրավունքին: Հետևաբար ներպետական իրավունքի նորմերը ոչ միայն չեն կարող հակասել միջազգային իրավական նորմերին, այլև պետք է ապահովեն դրանց պահանջների իրագործումը:

Վերոգրյալը թույլ է տալիս որոշ եզրակացություններ անելու ազգային քրեական օրենսդրության վրա միջազգային իրավունքի ազդեցության միջոցների մասին:

Նախ՝ քրեաիրավական որոշ հարցեր լուծելիս հնարավոր է ուղղակիորեն հղում կատարել միջազգային իրավունքի վրա:

Ապա՝ ավելի ունիվերսալ միջոց է քրեական օրենսդրության մեջ միջազգային իրավունքի պահանջներն արտացոլելը, որը կարող է իրականացվել երկու եղանակով՝ 1) միջազգային իրավական նորմը նույնությամբ քրեական օրենսդրության մեջ ընդգրկելով, 2)

միջազգային իրավական նորմը քրեական օրենսդրության մեջ իմպլեմենտացիայի ենթարկելով<sup>2</sup>:

Այսպիսով, միջազգային իրավունքի ազդեցությունը ներպետական քրեական օրենսդրության վրա կարող է ունենալ երեք եղանակ՝ հղում, ռեցեպցիա (տառացի ընդգրկում) և իմպլեմենտացիա (քրեական օրենսդրության մեջ ներառում՝ ներպետական օրենսդրության առանձնահատկությունները հաշվի առնելով): Վերջին դեպքում պետությունը մանրելու և ներպետական իրավական համակարգի համար առավել արդյունավետ իրավական նորմ ձևավորելու որոշակի հնարավորություն է ստանում<sup>2</sup>:

Ներպետական քրեական օրենսդրության վրա միջազգային իրավունքի ազդեցության այս եղանակները սերտորեն կապված են միջազգային իրավունքի և ներպետական քրեական օրենսդրության հարաբերակցության հարցի հետ: Պետք է նկատել, որ թեև միջազգային իրավունքի և ազգային քրեական օրենսդրության հարաբերակցության հարցում միանշանակ նշվում է միջազգային իրավունքի գերակայությունը, այնուամենայնիվ այստեղ որոշ ճշգրտումներ են անհրաժեշտ: Խոսքը հատկապես քրեական պատասխանատվությանը վերաբերող հարցերի մասին է: ՀՀ քրեական օրենսգրքի առաջին հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը պետք է ընդգրկվեն քրեական օրենսգրքում: Սա նշանակում է, որ եթե միջազգային իրավական նորմը որևէ արարքի համար քրեական պատասխանատվություն է նախատեսում, ապա այդ արարքը կատարած անձը չի կարող ներպետական օրենսդրությամբ քրեական պատասխանատվության ենթարկվել, քանի դեռ այդ նորմը իմպլեմենտացիայի կամ ռեցեպցիայի չի ենթարկվել ներպետական օրենսդրության մեջ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում ամ-

<sup>1</sup> St 'u Nagy K. Problems of relationships between international and domestic law. // Questions of international law. Leyden, 1977, էջ 139:

<sup>1</sup> St 'u Левин Д.Б., Актуальные проблемы теории международного права. М., էջ 247, 1974:

<sup>2</sup> St 'u Бибик О. Н., Источники уголовного права Российской Федерации, Автореф. ... дисс. кан. юрид. наук. Омск, 2005, էջ 8-12:

րագրվել է հետևյալ դրույթը. «Իրավական ակտերում տեղ գտած հանցակազմ կամ պատիժ նախատեսող դրույթները կարող են գործել միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո»: Ըստ էության սա ճիշտ է: Բանն այն է, որ միջազգային իրավական նորմերը սանկցիաներ չունեն, որոշ դեպքերում դրանցում բացակայում է նաև հանցակազմի հստակ նկարագրությունը. միջազգային իրավական ակտը ուղղակի բավարարվում է մասնակից պետություններին այս կամ այն արարքը քրեականացնելուն հորդորելով: Ակնհայտ է, որ նման պայմաններում միջազգային իրավական նորմերը չեն կարող ուղղակիորեն գործել: Բացի այդ, քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է: Պետք է նշել, սակայն, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքում առկա այն դրույթը, որ քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերը պետք է ընդգրկվեն քրեական օրենսգրքում, ինչպես նաև նոր քրեական օրենսգրքի նախագծում տեղ գտած վերը նշված ձևակերպումը խնդիրներ են առաջացնում ՀՀ Սահմանադրության հետ, որի հոդված 6-ի 4-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Կարծում ենք՝ այս տեսակետից ավելի ճիշտ են վարվել այն երկրները, որոնց սահմանադրություններում նման միանշանակ և կոշտ կարգավորում չկա: Այլ հարց է, որ ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանեցվի միջազգային իրավունքին: Կարծում ենք՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում կարելի էր վերապահում նախատեսել պատասխանատվություն նախատեսող միջազգային իրավական նորմերի կապակցությամբ և ձևակերպել դրույթ այն մասին, որ դրանք կարող են գործել միայն ՀՀ օրենսդրության մեջ ռեցեպցիայի կամ իմպլեմենտացիայի ենթարկվելուց հետո:

Պետք է նշել նաև, որ *քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ* հասկացությունը ավելի լայն բովանդակություն ու

նի և չի նույնանում այս կամ այն արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելով, այսինքն՝ քրեականացմամբ: Մասնավորապես, քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ կարելի է համարել նաև միջազգային իրավական այն նորմը, որը քաղաքացիության սկզբունքի կիրառման համար պարտադիր համարվող երկկողմանի հետապնդման սկզբունքից բացառություն է նախատեսում: Երկկողմանի հետապնդման սկզբունքը ենթադրում է, որ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձը ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով միայն այն դեպքում, երբ նրա կատարած արարքը՝ որպես հանցանք, նախատեսված է այն կատարելու վայրի պետության քրեական օրենսդրությամբ: Միննույն ժամանակ մի շարք միջազգային իրավական նորմերով նախատեսվում են բացառություններ, երբ որոշ հանցագործությունների (կոռուպցիոն հանցագործություններ, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հնացագործություններ և այլն) կատարման դեպքում վերը նշված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար բավական է, որ հանցանքը նախատեսված լինի ՀՀ քրեական օրենսգրքով: ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նման բացառություն նախատեսված է, և թվարկված են որոշ հանցանքներ, որոնց կատարման դեպքում երկկողմանի հետապնդում չի պահանջվում: Միննույն ժամանակ չի բացառվում, որ միջազգային իրավական այլ նորմերով ևս բացառություններ սահմանվեն, որոնք առժամանակ տեղ չգտնեն ՀՀ քրեական օրենսգրքում: Հարց է առաջանում՝ արդյոք այս դեպքերում էլ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի քրեական պատասխանատվության հարցը պետք է լուծվի ներպետական օրենսդրության համաձայն, այսինքն՝ քանի որ այս հանցագործությունները ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չեն բացառությունների շարքում, ուրեմն դրանք այլ պետության տարածքում կատարած ՀՀ քա-

դաքացին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձը չպետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության: Կարծում ենք, որ ոչ: Նման դեպքերում, երբ խոսքը ոչ թե արարքի քրեականացման, այլ արդեն իսկ ներպետական օրենսդրությամբ քրեականացված արարքի համար քրեական պատասխանատվության պայմանների մասին է, ապա միջազգային իրավական նորմը կարող է անմիջականորեն գործել: Այս գաղափարը իր արտացոլումն է ստացել ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգում և նախագծում:

Փոքր-ինչ ավելի բարդ է վիճակը այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքով համապատասխան հանցակագմը նախատեսված է, սակայն միջազգային վավերացված պայմանագրերի նորմերը և ՀՀ քրեական օրենսգրքի նորմերը հանցակագմի տարրերի կամ հատկանիշների կապակցությամբ տարբեր մոտեցումներ են դրսևորում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքը կարգավորում է անհրաժեշտ պաշտպանության հարցերը, ինչպես նաև պատասխանատվություն է նախատեսում անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանության համար: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և ծառայողական դիրքից: Մա նշանակում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ հնարավորություն կա պաշտպանությունն իրականացնել այլ միջոցներով (փախչել, այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմել), բայց պաշտպանություն իրականացնողը ընտրում է պաշտպանության այն ձևը, որը կապված է ոտնձգողին վնաս պատճառելու հետ (անհրաժեշտ պաշտպանություն), իրականացված պաշտպանությունը համարվում է իրավաչափ: Մինևույն ժամանակ 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական

սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ձևակերպումներից բխում է, որ, մահ պատճառելով կարելի է պաշտպանվել նույնիսկ այն դեպքում, երբ առկա էին պաշտպանության այլ միջոցներ: Մա հակասում է Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական հռչակագրի հոդված 2-ի դրույթներին, որոնց համաձայն՝ ոտնձգողին կյանքից զրկելը պետք է արդարացված լինի բացարձակ անհրաժեշտությամբ: Հակառակ դեպքում՝ առկա է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: Ստացվում է, որ ներպետական օրենսդրությունը թույլատրում է արարք, որն արգելված է միջազգային իրավունքով: Ուստի հարց է առաջանում՝ արդյոք անձը, որը, պաշտպանվելու այլ միջոց ունենալով, պաշտպանությունն իրականացրել է ոտնձգողին կյանքից զրկելով, պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով սպանության համար: Կարծում ենք, որ գործող իրավակարգավորման պայմաններում՝ ոչ: Մեր կարծիքով այն դեպքերում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու հարցը կապված է հանցակագմի հատկանիշների ձևակերպման, դրանց ընկալման հետ և այդ կապակցությամբ առկա է հակասություն ներպետական օրենսդրության ու միջազգային իրավունքի միջև, ապա հարցի լուծման միակ եղանակը ներպետական օրենսդրությունը միջազգային իրավունքին համապատասխանեցնելն է, որովհետև հակառակ պարագայում իրավակիրառ պրակտիկայում լուրջ խնդիրներ կառաջանան:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ քրեական օրենսդրության կիրառման ոլորտում միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի ապահովման առավել նպատակահարմար միջոցը նշված նորմերի ու սկզբունքների հստակ արտացոլումն է ներպետական քրեական օրենսդրության մեջ:

## МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО КАК ИСТОЧНИК УГОЛОВНОГО ПРАВА

Ара Габузян

*Заведующий кафедрой уголовного права ЕГУ,  
доктор юридических наук, профессор*

В статье обсуждаются вопросы соотношения международного и национального уголовного права.

В действующем УК РА сформулировано положение, согласно которому нормы, предусматривающие уголовную ответственность, должны быть включены в УК. Это означает, что нормы ратифицированных РА международных договоров, предусматривающие уголовную ответственность, не могут прямо применяться. Это, по сути, правильное положение противоречит части 4 статьи 6 Конституции РА, которая провозглашает приоритет норм ратифицированных международных договоров над национальным законодательством. В связи с этим автор предлагает пересмотреть указанную статью Конституции и предусмотреть исключение, согласно которому нормы ратифицированных международных договоров, предусматривающие уголовную ответственность, могут быть применены только после их имплементации или рецепции в национальное законодательство. Аналогично должна быть решена проблема и в тех случаях, когда нормы ратифицированных международных договоров, в отличие от национального законодательства, иным образом толкуют признаки состава преступления, что приводит к расширению круга преступных деяний. Что касается таких норм международного права, которые только предусматривают условия уголовной ответственности или позволяют освободить лицо от уголовной ответственности, то они могут прямо применяться.

В заключении автор приходит к выводу, что лучшими способами обеспечения применения норм международного права в национальной правоприменительной практике являются их имплементация или рецепция в национальное уголовное законодательство.

## INTERNATIONAL LAW AS A SOURCE OF CRIMINAL LAW

Ara Gabuzyan

*Head of the YSU Chair of Criminal Law,  
Doctor of Legal Sciences, Professor*

The article discusses the issues of interrelation of international law and national criminal law.

According to the regulation set by the RA current Criminal Code, all the norms setting criminal responsibility must be included in the Criminal Code. This means that the rules of international treaties ratified by the Republic of Armenia, which provide criminalization of certain deeds, can not be applied directly. In principal, this is a correct approach to the regulation of criminalization issues. However, it is in contrary to the Part 4 of Article 6 of the RA Constitution, which proclaims the priority of ratified international treaties over national legislation. In this regard, the author proposes to revise the mentioned article of the RA Constitution. He suggests providing an exception in that article, according to which the norms of ratified international treaties setting criminalization of deeds, can be applied only after their implementation or reception into the national legislation. The similar approach should be applied in cases when the rules of ratified international treaties, in contrast to the national legislation, have different interpretation of the attributes of corpus delicti, thus leading to the enlargement of the range of criminal acts. As to the rules of international law providing criminal liability or conditions for the release from criminal responsibility, they can be used directly.

In conclusion, the author came to the inference that the best way to ensure the application of international law in domestic law enforcement is its implementation or reception into national criminal legislation.

**Բանալի բառեր՝** միջազգային իրավունք, վավերացված միջազգային պայմանագիր, ազգային քրեական օրենսդրություն, քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ, քրեական պատասխանատվության պայմաններ, իմպլեմենտացիա, ռեցեպցիա:

**Ключевые слова:** международное право; ратифицированный международный договор; национальное уголовное законодательство; норма, предусматривающая уголовную ответственность; условия уголовной ответственности; имплементация; рецепция.

**Key words:** international law; ratified international treaty; national criminal legislation; norms setting criminal responsibility; conditions of criminal responsibility; implementation; reception.

## ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Սամվել Դիլբանդյան  
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի  
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Քրեական դատավարությունը՝ որպես գործընթաց բաժանվում է համապատասխան փուլերի, որոնք հաջորդում են միմյանց և դրանով ապահովում քրեական քաղաքականության իրականացումը: Քրեական դատավարությունը բնութագրվում է նրանով, որ այն բաժանվում է մասերի՝ մինչդատական և դատական վարույթների: Այդպիսի բաժանման հիմքում ընկած է քրեական գործերի քննության բարդությունը: Մեծամասամբ քրեական գործերով վարույթ իրականացնելու պահին հանցագործություն կատարած անձը հայտնի չի լինում կամ հայտնի լինելու պարագայում՝ պետք է ապացուցել նրա առնչությունը ենթադրյալ հանցագործությանը: Քրեական դատավարության պատմական զարգացումը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում փոփոխվում են դատավարության տիպերը, տեսակները և վարույթային ձևերը: Ճիշտ է, բոլոր երկրների համար քրեական դատավարության նպատակները մնում են ընդհանուր, սակայն դրանց հասնելու մեխանիզմները, պայմանավորված իրավական համակարգերի առանձնահատկությամբ, լինում են տարբեր:

Քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագիծն /այսուհետև՝ Նախագիծ/ առանձնանում է իր փուլային վարույթային կառուցվածքով: Այդ առանձնահատկությանը հանդիպում ենք ինչպես մինչդատական, այնպես էլ դատական վարույթներում: Դատավարության յուրաքանչյուր հաջորդ փուլ իր նախորդի նկատմամբ կրում է հսկողական բնույթ: